

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» (ԿՀԻԿ) հիմնադրամը հայտարարում է մրցույթ՝ Համագործակցության զարգացման և միջոցների ներգրավման պատասխանատուի թափուր աշխատատեղի համար:

## **Համառոտ նկարագրություն**

ԿՀԻԿ հիմնադրամը ստեղծվել է ՀՀ Կառավարության կողմից 2011 թվականին՝ Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների արդյունավետ իրականացմանը աջակցելու, ՀՀ քաղաքացիներին խորհրդատվական և մասնագիտական աջակցություն տրամադրելու, բազմաստիճան կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային իրազեկվածության և ֆինանսական կրթության ծրագրեր իրականացնելու նպատակով:

Համագործակցության զարգացման և միջոցների ներգրավման պատասխանատուն իրականացնում է կազմակերպության ֆինանսական և այլ անհրաժեշտ միջոցների զարգացման և ներգրավման աշխատանքներ՝ հաստատելով գործընկերային կապեր և նոր համագործակցություններ:

## **Հիմնական պարտականությունները ներառում են.**

- Շուկայի ուսումնասիրություն, ֆինանսավորման աղբյուրների որոնում
- Դոնոր կազմակերպությունների, հավանական գործընկեր կառույցների ցանկերի կազմում և պարբերական թարմացում, դրամաշնորհային ծրագրերի, մրցույթների որոնում տեղեկատվական աղբյուրներում
- Ծրագրային առաջարկների մշակում և կազմում՝ դոնոր կազմակերպություններին ներկայացնելու, դրամաշնորհային և այլ մրցույթների մասնակցելու համար
- Բանակցությունների վարում, նոր գործընկերային կապերի հաստատում
- Ըստ անհրաժեշտության՝ պայմանագրերի, հուշագրերի և այլ համանման փաստաթղթերի կազմում
- Ընկերության գործունեության ընդլայնման հնարավորությունների որոնում հարակից ոլորտներում
- Ֆինանսական միջոցների ներգրավում՝ հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի, դրանց բաղադրիչների և նոր մտահղացումների համար

## **Պահանջվող որակավորումներ և հմտություններ**

- Բարձրագույն հումանիտար կամ տեխնիկական կրթություն (ցանկալի է տնտեսագիտական, իրավաբանական կամ սոցիոլոգիական)
- Անգլերենի և ռուսերենի գերազանց իմացություն (այլ օտար լեզուների իմացությունը առավելություն է)
- Համակարգչից և համացանցից օգտվելու գերազանց կարողություն
- Պրեզենտացիոն նյութերի մշակման և ներկայացման գերազանց հմտություններ (մրցույթի 2-րդ փուլ անցած մասնակիցներին կարող է հանձնարարվել նմանատիպ աշխատանքի իրականացում)
- Բանակցություններ վարելու և հաղորդակցական բարձր հմտություններ
- Ընդհանուր գիտելիքներ ֆինանսների, ֆինանսական պլանավորման վերաբերյալ
- ՀՀ օրենսդրությանը բազային տիրապետում
- Նախկին համանման աշխատանքային փորձը ցանկալի է
- Միջազգային կառույցների հետ աշխատանքային փորձը առավելություն է

## **Մենք ունենք Ձեր կարիքը, եթե՝**

Դուք տեղեկացված եք, թե ինչպես և որտեղ փնտրել Հայաստանում և արտերկրում դրամաշնորհային ծրագրեր առաջարկող կազմակերպություններին, հավանական ֆինասավորող և համագործակցող կառույցներին, տիրապետում եք նրանց հետ աշխատանքային կապեր և համագործակցություններ հաստատելու հնտություններին, սիրում եք վերլուծական աշխատանք, ունեք բանակցություններ վարելու, գրավոր առաջարկներ (այդ թվում՝ օտար լեզուներով) մշակելու և ներկայացնելու գերազանց կարողություններ:

## **Ինչպե՞ս դիմել**

Բոլոր հետաքրքրված և նշված որակավորումներին համապատասխանող անձանց խնդրում ենք դիմել ՀՀ ՊԿԱ շրջանավարտների միության և կարիերայի կենտրոն կամ զանգահարել Ելենա Գրիգորյանին՝ 099414747 հեռախոսահամարով: Անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրական՝ CV, և մոտիվացիոն նամակ՝ նշելով ձեր հիմնական առավելություններն այս աշխատանքի համար:

Խնդրում ենք դիմել մինչև 2016թ. ապրիլի 15-ը: